ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կտայքի մարզի Թեղենիք համայնք
ՀՀ, Կտայքի մարզ, գ.Թեղենիք, (060) 466492, teghenik.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 10

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" հայաստանի Հանրապետության օրենքի 35հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով՝ որոշում եմ

1.Սարգիս Երվանդի Մինասյանին պատկանող բնակավայրի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և շինությանը /կադաստրային ծածկագիր 07-032-17-8/ տրամադրել հետևյալ հասցեն՝1-ին փողոց տուն 33:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2018 թ. հունիսի 05
գ.Թեղենիք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Թեղենիք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Թեղենիք, (060) 466492, teghenik.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 11

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով,ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, ,,Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին"ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, ,,Տեղական ինքնակառավարման մասին"ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով՝ ***որոշում եմ՝***

1.Թեղենիք համայնքում հաստատել՝

1)Աղետների ռիսկի կառավարման /այսուհետ՝ԱՌԿ/խորհրդի կազմը՝համաձայն հավելված N1-ի

2)ԱՌԿ խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելված N-2

2.Խորհրդի անդամներին՝

3)մինչև սույն թվականի հունիսի 8-ը ներկայացնել Թեղենիք համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը

4)յուրաքանչյուր տարվա հունիսի 15-ը իրականացնել համայնքի ԱՌԿ պլանի ճշգրտում:

3.ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալ Գոհար Մուրադյանին՝ սույն հրամանի 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել սույն որոշման փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծը:

4.Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2018թ հունիսի 05 գ.Թեղենիք